ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 3/07.2/10427
«_____» «_____» 2021թ.
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ Շ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2021 թվականի օգոստոսի 13-ի N 282398 գրության՝ տեղեկացնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունը 2021 թվականի հուլիսի 14-ի էլեկտրոնային փոստով ստացված Ձեր հաղորդագրության վերաբերյալ /Արագած լեռան Քարե լճի ափամերձ հատվածի ապօրինի պարսպապատված և զավթված լինելու մասին/ գրություններով դիմել է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Բնապահպանության և ընդերքի և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմիններ՝ բարձրացված խնդիրն ուսումնասիրելու և շրջակա միջավայրի նախարարությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի պետի 2021 թվականի հուլիսի 19-ի N 04/05-Ա «Զննում նշանակելու մասին» որոշմամբ զննում է իրականացվել Արագած լեռան Քարե լճի ափամերձ տարածքում: Զննությունից պարզվել է, որ Արագած լեռան Քարե լճի ափամերձ հատվածի պարիսպը ներառված է «Ալագյազ Սար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված 2018 թվականի նոյեմբերի 13-ի N 13112018-02-0025 սեփականության իրավունքի գրանցման վկայականում:

Առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:

Հարգանքով՝ …Ա.Մազմանյան

8/19/2021

X

ԳԱՅԱՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Signed by: GABRIELYAN GAYANE 5912850486

Հասարակայնության հետ
կապերի բաժին Ա.Սուքիասյան 011 818 559